ԵԴ/6931/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

01.03.2023թ. ք.Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Լիզա Գրիգորյանս, ուսումնասիրելով «Պրոֆշին 2020» ՍՊ ընկերության ընդդեմ Միասնական սոցիալական ծառայության՝ Միասնական սոցիալական ծառայության 14.11.2022 թվականի թիվ Ա/Ո-2՝ «Պրոֆշին 2020» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին՝ հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2023թ. փետրվարի 21-ին «Պրոֆշին 2020» ՍՊ ընկերության տնօրեն՝ Էդուարդ Թորոսյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Միասնական սոցիալական ծառայության՝ Միասնական սոցիալական ծառայության 14.11.2022 թվականի թիվ Ա/Ո-2՝ «Պրոֆշին 2020» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը 21.02.2023 թվականին մուտքագրվել է դատարան և նույն օրը մակագրվել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր՝ Լ.Գրիգորյանին:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը դատավորի աշխատակազմին է հանձնվել 24.02.2023 թվականին:

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:

Դատարանն գտնում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է Պատասխանողից

պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Տվյալ դեպքում, ելնելով ներկայացված վեճի և հայցապահանջի բովանդակությունից, դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործը կարող է քննվել գրավոր ընթացակարգով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 234.5 և 234.6, 234.9, 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Պրոֆշին 2020» ՍՊ ընկերության ընդդեմ Միասնական սոցիալական ծառայության՝ Միասնական սոցիալական ծառայության 14.11.2022 թվականի թիվ Ա/Ո-2՝ «Պրոֆշին 2020» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ հայցադիմումն ընդունել վարույթ և սույն գործը քննել գրավոր ընթացակարգով:

2. Պատասխանող Միասնական սոցիալական ծառայությունից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Պարզաբանել կողմերին, որ՝

- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.

- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ

այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

- հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով և դատական ակտը հրապարակել 2023 թվականի ապրիլի 13-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԼԻԶԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ